# 02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն



ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

10 (1409) • 22 մարտի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am


## Արամ ՄԱՆՈՒԿՅԱՆ



Մարտի 19-ը Հայաստանի Հանրապետության հիմնադիրներից մեկի՝ Արամ Մանուկյանի ծննդյան օրն է:

Եզակի է Արամ Մանուկյանը որպես քաղաքական-պետական գործիչ. Վանի ինքնապաշտպանության կազմակերպիչներից, Վանի առաջին նահանգապետ՝ 1915 թվականին, Երեւանի նահանգի Հատուկ կոմիտեի ղեկավար եւ Սարդարապատի ճակատամարտի կազմակերպիչ՝ 1917-1918 թվականներին, Հայաստանի Հանրապետության հիմնադիրներից եւ ներքին գործոց առաջին նախարար՝ 1918 թվականին:

Արամ Մանուկյանի անունը անխզելիորեն կապված է հայոց պետականաշինության, պետական ինստիտուտների կազմավորման, ժողովրդի մեջ օրենքի եւ օրինականության գաղափարի ամրապնդման, իրավագիտակից հասարակության ձեւավորման հիմնադիր քայլերի հետ:

Հայաստանի Առաջին Հանրապետության անդրանիկ կառավարության մեջ Արամ Մանուկյանը ստանձնեց Ներքին գործերի նախարարության ղեկավարումը, որի մեջ էր մտնում նաեւ հաղորդակցության, կրթության, պարենավորման ղեկավարումը: Ներքին գործոց նախարարի պաշտոնում Արամ Մանուկյանի ընտրությունը պատահական չէր, ժամանակակիցների վկայությամբ՝ նա միակ մարդն էր, որ այդ բացառիկ ծանր ժամանակներում ընդունակ էր կարգ ու անդորրություն հաստատել երկրում եւ պետական շինարարություն սկսել:

Արամ Մանուկյանը պարզապես ներքին գործերի նախարար չէր, եւ իր ղեկավարած կառույցն էլ պարզապես նախարարություն չէր: Նա երկրի ողջ կյանքն էր նորոգում՝ սկսած հանցավորության դեմ պայքարից եւ կարգուկանոնի հաստատումից մինչեւ հաղորդակցության ուղիների վերահսկում, մինչեւ շինականի ու որբերի հոգսերի թեթեւացում, մինչեւ կրթություն...

Արամ Մանուկյանի ավանդը Հայաստանի Հանրապետության եւ հայ ժողովրդի համար ոչ միայն արդիական, այլեւ գործունեության ծրագիր է նաեւ այսօր ու միշտ:

## Ընդունելություն ՀՀ ոստիկանությունում

Մարտի 18-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն ընդունեց Հայաստանում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Լին Թրեյսիին եւ ԱՄՆ դեսպանության թմրամիջոցների դեմ պայքարի եւ իրավապահ համագործակցության ծրագրի տնօրեն Մայքլ Շուլմանին:



Վալերիյ Օսիպյանը ներկայացրեց ՀՀ ոստիկանության եւ ԱՄՆ դեսպանատան համագործակցությունը, որը հիմնականում ուղղված է թմրամիջոցների անօրինական շրջանառության, թրաֆիքինգի, ընտանեկան բռնության, փողերի լվացման դեմ պայքարին: Համագործակցության շրջանակներում ոստիկանների համար ԱՄՆ համապատասխան փորձագետների մասնակցությամբ պարբերաբար անցկացվում են սեմինարներ, վերապատրաստման դասընթացներ, հանդիպումներ:

Վալերիյ Օսիպյանը հույս հայտնեց, որ սերտ համագործակցությունը ոչ միայն կպահպանվի, այլեւ կզարգանա՝ ընդգրկելով նոր ոլորտներ:

Լին Թրեյսին բարձր գնահատեց Հայաստանի ոստիկանության աշխատանքը: Նա նշեց, որ ուրախ էր հանդիպել ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանին եւ քննության առնել, թե ինչպես Միացյալ Նահանգների կառավարությունը կարող է աջակցել Հայաստանի ոստիկանության կարողությունների զարգացմանն ուղղված նրա ջանքերին՝ նպաստելով ժողովրդին ծառայելու մշակույթի խորացմանը:

Խոսվեց Հայաստանում պարեկային ոստիկանության ձեւավորման, ճանապարհային ոստիկանության բալային համակարգի ներդրման, ինչպես եւ համագործակցության խորացման հարցերի մասին:

Հանդիպմանը քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր եւս:

## Ապօրինություններ Գյումրիի մարզադպրոցում

Ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկությունների հիման վրա ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության, Շիրակի մարզային վարչության եւ Մուշի բաժնի ծառայողները համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզել են, որ Գյումրի քաղաքի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրենն ապօրինություններ է թույլ տվել:



Մասնավորապես, 2013-ից 2018 թվականներին փոխտնօրեն, մարզիչներ, պահակներ եւ բանվոր է հրամանագրել յոթ քաղաքացու, որոնք իրականում աշխատանքի չեն ներկայացել, իսկ նրանց անվամբ դուրս գրված աշխատավարձը՝ 23 միլիոն դրամ, յուրացվել է:

Հարուցվել է քրեական գործ:

## Ավազակությունը բացահայտվեց



Մարտի 15-ի գիշերը Արարատի մարզի Լուսառատ գյուղում ավազակային հարձակում էր կատարվել:

Երկու տղամարդ դարպասի բաց դռնից մտել էին միայնակ ապրող ամուսինների տուն: Նախ դարանակալել էին ավտոտնակում: Ձայնի վրա 59-ամյա տանտիկինը մտել էր ավտոտնակ ու լույսը վառել: Դարանակալած տղամարդիկ հարձակվել էին կնոջ վրա ու փորձել փակել բերանը, որ չբղավի, սակայն կնոջը հաջողվել էր կանչել ամուսնուն: Ձայն լսելով՝ ավտոտնակ էր մտել նաեւ տանտերը: Ձեռնամարտ էր սկսվել, որի ընթացքում հանցագործներից մեկը դանակահարել էր տանտիրոջը, ինչից հետո փախել էին:

Ամուսինները իմաց էին տվել հարեւաններին ու բարեկամներին, նրանք էլ ահազանգել էին ոստիկանություն ու «շտապօգնություն»:

էջ 6

## Որդին սպանել էր հորը



Մարտի 10-ին մի քաղաքացի զանգել է «շտապօգնություն» եւ հայտնել, որ Ջրվեժ գյուղի 8-րդ փողոցի տներից մեկում դեպք է տեղի ունեցել: Հասցեով մեկնած «շտապօգնության» խումբն արձանագրել էր, որ տանը տղամարդու դի կա: Ջրվեժ մեկնած ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները պարզեցին, որ մահացածը 64-ամյա Մելքոն Չոլախյանն է: Տանը հայտնաբերվեցին արնանաման հետքեր, արնանման հետքերով դանակներ եւ այլ իրեր: Մահացածի մարմնին կտրածծակած վնասվածքներ կային:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում պարզվեց, որ հայր եւ որդի կենցաղային հարցերի շուրջ վիճել են, որի ընթացքում որդին դանակահարել էր հորը: Ոստիկանները 36-ամյա Գեւորգ Չոլախյանին բերման ենթարկեցին Կոտայքի բաժին, ապա ներկայացրին դեպքի նախաքննությունը վարող մարմնին:

Գեւորգ Չոլախյանը կալանավորվել է:

## Չարաշահումներ դպրոցում



Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում պաշտոնատար անձի կողմից թույլ տրված չարաշահումների վերաբերյալ տեղեկություններ էին ստացվել:

Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության եւ Վայքի բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Վայք քաղաքի հիմնական դպրոցի տնօրենը, որ պաշտոնավարում է 2013 թվականից, օգտագործելով պաշտոնեական դիրքը, իր որդուն հրամանագրել է որպես սոցիալական մանկավարժ, իսկ հարսին՝ որպես գնումների համակարգող: Նրանք 2017 թ. հունվարից 2018-ի դեկտեմբեր փաստացի աշխատանքի չեն ներկայացել: Նրանց անվամբ դուրս գրված երկուսուկես միլիոն դրամից ավելի աշխատավարձը յուրացրել է դպրոցի տնօրենը:

Հարուցվել է քրեական գործ:

### Բնակարաններ էր «դասավորում»



*Համացանցով ներկայանում էր դատախազության պաշտոնյա եւ շահում կանանց վստահությունը:*

էջ 2

### Պատժի անխուսափելիություն



*Տեղյակ էր ոչ միայն կնոջ ոսկյա զարդերի մասին, այլեւ՝ որտեղ են դրանք պահվում:*

էջ 3

### Քրեական օրենսգիրք. սպանություն



*Որովայնի վնասվածքներով հիվանդանոց տեղափոխված երիտասարդը մահացավ:*

էջ 5

# Անչափահասների գործերով լավագույն տեսուչը

Մարդը հասարակության հետ շփվելու իր առաջին քայլերը սկսում է դպրոցից: Դպրոցից է սկսում անչափահասների հետ իր աշխատանքը նաեւ անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի դպրոցական ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Արամ Հովհաննիսյանը` քաջ գիտակցելով, որ այստեղ է ձեւավորվում ապագա քաղաքացին: Ոստիկանության հատուկ հանձնաժողովը 2018 թ. անչափահասների գործերով լավագույն տեսուչ հենց նրան է ճանաչել:

Տարաս Շեւչենկոյի անվան ավագ դպրոցի աշակերտները Արամ Հովհաննիսյանին վերաբերվում են ինչպես հոգատար մանկավարժներից մեկին, որը ծրագրված դասերին զուգահեռ` խոսում է նաեւ բացասական երեւույթներից, հանցավոր արարքներից զերծ մնալու անհրաժեշտությունից: Օրինակ, նրանցից քչերը գիտեն, որ կռփազենքը, դանակների որոշ տեսակներ սառը զենք են, որ չի կարելի դրանք գործածել, առավել եւս` դպրոց բերել: Չգիտեն նաեւ համակարգչային խաղերից կախվածության վնասակար հետեւանքների մասին. թեմաներ, որոնց դպրոցական տեսուչներն իրենց գործառութային պարտականություններից ելնելով` հաճախ են անդրադառնում:

«Անչափահասների հետ աշխատանքը հաճելի, միեւնույն ժամանակ` խիստ պատասխանատու գործ է: Մեկի հետ պետք է կարողանաս ընկեր լինել, մյուսի հետ շփվես ծնողի կամ ուսուցչի նման: Անհրաժեշտ է հետեւել, որ չլինեն դասերից չարամտորեն խուսափողներ, չվնասեն դպրոցի գույքը, հեռու մնան վնասակար սովորություններից: Հանդիպում-զրույցների ժամանակ աշխատում ենք բարձրացնել աշակերտների իրավագիտակցությունը, բացատրում ենք նրանց իրավունքներն ու պարտականությունները»,- մեզ հետ զրույցում ասաց Արամ Հովհաննիսյանը:



Ոստիկանության հետ համագործակցության արդյունավետությունից ու, մասնավորապես, Արամ Հովհաննիսյանի ծառայությունից իրենց գոհունակությունն էին հայտնում թե՛ դպրոցի ուսուցիչները, թե՛ տնօրենը:

Արամ Հովհաննիսյանի գործառութային պարտականությունները միայն դպրոցական տեսուչի աշխատանքով չեն սահմանափակվում: Բաժնում հերթապահելիս ընտանեկան բռնության վերաբերյալ ահազանգը ստանալուն պես դեպքի վայր է մեկնում, զրուցում տուժողի հետ, պարզում հանգամանքներն ու համապատասխան միջոցառումներ ձեռնարկում:

Արամ Հովհաննիսյանը համակարգում ծառայում է 2001 թվականից, վայելում է կոլեկտիվի հարգանքը, երբեք անհարկի չի բացակայում, չի ուշանում: Պարտաճանաչ, կարգապահ ծառայող է: 2018 թվականի ընթացքում բացահայտել է հանցագործության քառասունմեկ դեպք, այդ թվում` գողության, ծանր մարմնական վնասվածք պատճառելու, խարդախության, թմրանյութերի ապօրինի շրջանառության, անձի առեւանգման, հայտնաբերել է նաեւ հետախուզվողների»,- լավագույն տեսուչին այսպես բնութագրում էր անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի պետ Սիմոն Հարությունյանը:

Մյուսների գովեստի խոսքերին հակառակ` Արամ Հովհաննիսյանն իր ծառայության մեջ արտառոց ոչինչ չի տեսնում: «Աշխատանքի բնույթն է այդպիսին,- ասում է,- որին տասնյոթ տարի է` զինվորագրվել եմ: Որպես ժամկետային զինծառայող`նախ ծառայել եմ ոստիկանության զորքերում, հետո ծառայությունս շարունակել եմ ոստիկանության համակարգում: Ոստիկանության Կենտրոնական բաժնում, որպես անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի դպրոցական ավագ տեսուչ, աշխատում եմ 2016 թվականից: Սիրում եմ իմ աշխատանքը. հատկապես աշակերտների հետ հետաքրքիր է, բայց անընդհատ իմացածդ կատարելագործելու անհրաժեշտություն կա: Ինչ վերաբերում է լավագույնի կոչմանը, ապա նման պարգեւները պարտավորեցնում են ավելի լավ ծառայելու»:

Իսկ մեզ մնում է անչափահասների գործերով տարվա լավագույն տեսուչին մաղթել նորանոր հաջողություններ, անվտանգ ծառայություն:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

# Հափշտակություններ «Հայփոստ»-ից




Հունվարի 29-ին մայրաքաղաքի Շենգավիթ վարչական շրջանում կողոպուտ էր կատարվել: Բագրատունյաց պողոտայի «Հայփոստի» մասնաճյուղում մի տղամարդ աշխատակցի ներկայությամբ 117 հազար դրամ է հափշտակել ու փախել:

Ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները սկսեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ու քննչական գործողությունները` կատարվածի հանգամանքները պարզելու եւ կողոպուտը կատարած անձին հայտնաբերելու ուղղությամբ:

Մարտի 1-ին փող հափշտակվեց նաեւ «Հայփոստ»-ի Սեբաստիայի փողոցի մասնաճյուղում: Դեմքը քողարկած տղամարդը, դարձյալ աշխատակցի ներկայությամբ, դարակից գումար էր հափշտակել ու փախել:

Ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողները ձեռնամուխ եղան հանցագործության բացահայտմանը` համագործակցելով այլ ստորաբաժանումների գործընկերների հետ: Երկու դեպքերի վերլուծությամբ եզրահանգեցին` հանցավորը նույն անձն է:

Ձեռնարկվեցին տարաբնույթ միջոցառումներ: Նախ պարզեցին կողոպուտը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը` մայրաքաղաքի բնակիչ Երվանդ Գեւորգյանը հայտնաբերվեց Սեբաստիայի փողոցում:

Ոստիկանները Երվանդ Գեւորգյանին ներկայացրին դեպքի նախաքննությունը վարող քննչական բաժին: Նա ե՛ւ Շենգավիթում, ե՛ւ Մալաթիա-Սեբաստիայում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ տվեց խոստովանական ցուցմունք:

Կատարվում է քննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

# Բնակարաններ էր «դասավորում»

*Դեռ անցած տարվանից ոստիկանության տարածքային ստորաբաժանումներ դիմած կանայք հայտնում էին, որ ոմն Սարգիս Սարգսյան, չարաշահելով իրենց վստահությունը, խարդախությամբ գումար է հափշտակել: Արմավիրի մարզի Ապագա գյուղում հաշվառված Սարգիս Սարգսյանի բազմադրվագ խարդախությունների առթիվ հարուցվել էին քրեական գործեր:*



*Խարդախության նույն մեխանիզմը կրկնվում էր բոլոր հանցադրվագներում: Սարգիս Սարգսյանը համացանցով ծանոթանում էր կանանց հետ, ներկայանում գլխավոր դատախազության պաշտոնյա եւ շահում ապագա զոհի վստահությունը`ընդհուպ խոստանալով ամուսնանալ: Գործնական ու հոգատար մարդու կերպարը կերտելուց հետո անցնում էր նյութական գայթակղությանը, որի առարկան իբր Հայաստանի համահայկական հիմնադրամի միջոցով բարեգործությամբ հատկացվող բնակարաններն էին: Խոստանում էր միջնորդել դրանց ձեռքբերման հարցում` օգտագործելով իր երեւակայական գործնական կապերը:*

*Սարգիս Սարգսյանը կանանց ուղեկցում էր նորակառույց շենքեր կամ կառուցվող շենքերի շինհրապարակներ, առաջարկում էր ընտրել բնակարանի դիրքը, հարկը, սենյակների քանակն ու այլ ճշտումներ անում: Հանդիպումներ էր կազմակերպում կեղծ պաշտոնյաների հետ կամ կանանց ներկայությամբ զանգում նրանց: Կանայք իրավապահներին էին դիմել միայն այն ժամանակ, երբ նա սկսել էր չպատասխանել հեռախոսազանգերին: Հասկացել էին, որ բնակարանի փոխարեն ունեն հարյուր հազարավոր դրամի պարտքեր, չմարված վարկեր ու ոսկեղեն`գրավատներում:*

*Քրեական գործերը միացվեցին մեկ վարույթում: Բացատրական աշխատանքների արդյունքում Սարգիս Սարգսյանը ներկայացավ ոստիկանության Էրեբունու բաժին: Նա կալանավորվել է:*

*Նախաքննությունը շարունակվում է:*

**Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ**

# Եվգենի ՊԱՏԱԼՈՎ



Կյանքից հեռացավ միլիցիայի պաշտոնաթող գեներալ-լեյտենանտ, 1977-1983 թթ. Հայաստանի ներքին գործերի նախարար Եվգենի Պատալովը:

Ծնվել է 1925 թ., Ռուսաստանի Խարբին քաղաքում:

1957 թվականից ԽՍՀՄ ներքին գործերի համակարգում էր: Նախ աշխատել է Մոսկվայի Լենինյան շրջանի ՆԳ բաժնում` զբաղեցնելով տարբեր պաշտոններ: 1958-1962 թթ. սովորել է ԽՍՀՄ միլիցիայի բարձրագույն դպրոցում: 1964 թվականին նշանակվել է Մոսկվայի Տիմիրյազեւի շրջանի ներքին գործերի բաժնի պետ, 1967 թվականին` Մոսկվա քաղաքի քրեական հետախուզության պետի տեղակալ: 1971-1974 թթ. Կիրովի մարզի ներքին գործերի մարզային վարչության պետն էր:

1974 թ. դեկտեմբերին նշանակվել է Հայաստանի ներքին գործերի նախարար:

Հայաստանում Եվգենի Պատալովը նոր մարդ էր, թվում էր` երկար ժամանակ է անհրաժեշտ` իրադրությանը ծանոթանալու, գործը ձեռքը վերցնելու համար: Սակայն ներքին գործերի համակարգում լուրջ դպրոց անցած, փորձառու Պատալովը «հուսախաբ» արեց: Նրա ձեռնարկած միջոցառումները միանգամից բարձրացրին թե՛ իր, թե՛ միլիցիայի հեղինակությունը: Լինելով պրոֆեսիոնալ` մեծ ուշադրություն էր դարձնում կադրային քաղաքականությանը, կադրերի վերադասավորմանը, նրանց պատասխանատվության բարձրացմանը, մասնագիտական գիտելիքների ձեռքբերման խնդիրներին: Նրա օրոք Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում կառուցվեցին կամ հիմնովին նորոգվեցին ՆԳ բաժինների շենքերը, կառուցվեց հոսպիտալի շենքը:

Եվգենի Պատալովը շատ սկզբունքային էր, խստապահանջ: Միլիցիայի աշխատանքը նրա տարերքն էր, անհանդուրժող էր յուրաքանչյուր չբացահայտված հանցագործության համար, անհանդուրժող էր ցանկացած օրինախախտման դեպքում:

Մատուցած ծառայությունների համար երկրի ղեկավարության կողմից բազմիցս արժանացել է բարձր պարգեւների:

1983 թվականի նոյեմբերից ծառայությունը շարունակել է Մոսկվայում, որտեղ եւ ապրում էր մինչեւ մահկանացուն կնքելը:

Միլիցիայի գեներալ-լեյտենանտ Եվգենի Պատալովի պայծառ հիշատակը, մատուցած ծառայությունները միշտ կմնան նրան ճանաչած, նրա հետ ճանապարհ անցած մարդկանց սրտերում:

**Հանրապետության ոստիկանության վետերանների խորհուրդ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

**Փետրվարի 19-ին ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության աշխատակիցների ուղեկցությամբ ՌԴ Սարատով քաղաքից Հայաստան տեղափոխվեց 2015 թվականից գողության համար հետախուզման մեջ գտնվող Սարգիս Հովսեփյանը: Ու նորից հաստատվեց պատժի անխուսափելիության օրինաչափությունը:**



# Պատժի անխուսափելիություն

Մայրաքաղաքի 54-ամյա բնակիչ Սարգիս Հովսեփյանը ո՛չ օրենքի հետ «սեր ուներ», ո՛չ ընտանիքի, ո՛չ շրջապատի: Երեք դատվածությունները, ընտանեկան անախորժությունները, հարեւանների, բարեկամների հետ անհաշտությունները, գողության մեղադրանքով հետախուզման մեջ գտնվելը դրա ապացույցն են:

Վերջին դատվածությունը 2010 թվականին էր. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը նրան հինգ տարի ժամկետով ազատազրկման էր դատապարտել քրեական օրենսգրքի 119 (խոշտանգում) եւ 137 (սպանության սպառնալիք) հոդվածները խախտելու համար: 2013 թվականին պայմանական-վաղաժամկետ ազատվել էր ու դեռ դատվածությունը չմարած՝ կրկին հայտնվել իրավապահների տեսադաշտում: Այս անգամ՝ գողության համար: Գողությունը կատարել էր ի՛ր տնից:

Սարգիս Հովսեփյանը կնոջ եւ որդիների հետ բնակվում էր իր կառուցած առանձնատանը: Երբ դատարանը երկրորդ անգամ նրան պատիժ էր նշանակում (խուլիգանություն էր արել), միաժամանակ ամուսնալուծության հայց լսեց:

Պատժի կրումից հետո կինը ներեց ամուսնուն. հաշտվեցին ու շարունակեցին համատեղ կյանքը մինչեւ 2010 թվականը, երբ Սարգիսը երրորդ անգամ հայտնվեց դատարանում:

Երեք տարի անց, երբ պայմանական-վաղաժամկետ ազատվեց, տան դռներն արդեն փակ էին նրա առջեւ: Քրեական օրենսգրքի հետ «բարեկամացած» Սարգսին այլ կենսակերպ էր ընտրել, մանկավարժի իր աշխատանքին ու որդիների դաստիարակությանը նվիրված կինն՝ այլ:

Ազատվելուց հետո Սարգիսը բնակություն հաստատեց հայրական տանը: Միանալու շուրջ կնոջ հետ բանակցությունները անիմաստ էին, բայց Սարգսին իրենց ընդհանուր տան հետ կապված այլ հետաքրքրություններ ուներ: Տեղյակ էր ոչ միայն կնոջ ոսկյա զարդերի մասին, այլեւ՝ որտեղ են դրանք պահվում: Իսկ երբ կինը որդիների հետ մի քանի օրով հանգստանալու մեկնեց, տեղահան արեց պատուհանի ճաղավանդակը, որ ժամանակին անձամբ էր տեղադրել՝ գողերի մուտքը դժվարացնելու համար եւ մտավ տուն: Օտարի պես մտավ, բայց ներսում ամեն ինչ ծանոթ էր. ադամանդյա մատանիներ, ոսկյա շղթա, ժամացույց, ոսկյա ականջօղեր, հազար դոլար գողացավ ու պատուհանով հեռացավ:

Գողության մասին կինը ոստիկանությունում հաղորդում տվեց գողությունից օրեր անց:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումների արդյունքում իրավապահների տեսադաշտում հայտնված կասկածյալներից մեկն էլ Սարգիսն էր:

Ոստիկանությունում հերքեց առաջադրված մեղադրանքը, քաղաքից չբացակայելու մասին ստորագրություն տվեց ու հաջորդ օրն իսկ հեռացավ ոչ միայն քաղաքից, այլեւ հանրապետությունից:

Հարուցված քրեական գործի շրջանակներում ձեռք բերված ապացույցներով հիմնավորվեցին Սարգիս Հովսեփյանի նկատմամբ կասկածները: Նրան հայտնաբերելու ուղղությամբ հետախուզում հայտարարվեց:

2018 թվականի նոյեմբերին ռուս գործընկերների հետ համագործակցությունը դրական արդյունք տվեց. Սարգիս Հովսեփյանը հայտնաբերվեց Սարատով քաղաքում, ձերբակալվեց, իսկ 2019-ի փետրվարին ոստիկանության ՔՀԳՎ օպերատիվ խմբի ուղեկցությամբ տեղափոխվեց Հայաստան:

Կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

**Համիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Արարքը վերաորակվեց



**Փետրվարի լույս 4-ի գիշերը ոստիկանության Կենտրոնական բաժնում հիվանդանոցից ահազանգ հնչեց. «շտապօգնության» խումբը մի տղամարդու էր Էրեբունուց տեղափոխել հիվանդանոց: Նախնական տվյալներով՝ նրա մոտ ախտորոշվեց գլխուղեղային վնասվածք եւ քթոսկրի կոտրվածք: 61-ամյա տղամարդը տաքսու վարորդ էր: Նրա հայտնածով՝ Երվանդ Քոչարի փողոցում ծեծի էր ենթարկվել:**

**Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները պարզեցին, որ ծեծողները ուղեւորներն էին: Վեճը ծագել էր անհիմն պատճառից եւ ավարտվել վարորդին ծեծելով:**

**Կենտրոնի ոստիկանները օպերատիվ պարզեցին ուղեւորների ինքնությունն ու գտնվելու վայրը: Դեպքից երկու ժամ անց Նոր Խարբերդում ապրող Էդգար Գրիգորյանն ու Գարսեւան Գեւորգյանը հայտնաբերվեցին ու բերման ենթարկվեցին ոստիկանության Կենտրոնական բաժին: Նրանք հայտնեցին, որ տվյալ տաքսիում եղել են, բայց վարորդին չեն ծեծել:**

**Ապաքինվելուց հետո տաքսու վարորդը իրավապահներին հայտնեց, որ ոստիկանություն բերման ենթարկված տղամարդիկ ոչ միայն իրեն ծեծել են, այլեւ մոտը փող են փնտրել եւ չգտնելով՝ հեռացել են: Ընդ որում, ըստ նրա՝ իրեն ծեծողներից մեկի մոտ դանակ էր նկատել:**

**Տուժողի ցուցմունքի հիման վրա հարուցված քրեական գործը վերաորակվել է՝ ավազակությունը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, զենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ: Բերման ենթարկվածներից Էդգար Գրիգորյանը վերջերս էր համաներմամբ ազատվել:**

**Նախաքննությունը շարունակվում է:**

# Ապօրինություններ վարկային կազմակերպությունում




Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի եւ քրեական հետախուզության գլխավոր վարչությունների ծառայողների համատեղ միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ «Փարվանա-Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպության Սեւանի մասնաճյուղի կառավարիչ Վահրամ Ղազարյանը 2015-2018 թթ., չարաշահելով մոտ հիսուն անձանց վստահությունը՝ ձեւական կնքել է փոխառության պայմանագրեր եւ վարկային կազմակերպությունում ավանդ ձեւակերպելու պատրվակով խարդախությամբ հափշտակել է մոտ 1 միլիոն դոլար՝ խոստանալով ամսական ապահովել տարբեր չափերի եկամտաբերություն:

Պարզվել է նաեւ, որ 2018-2019 թթ. նա մի շարք քաղաքացիների անուններով կնքելով գրավի կեղծ պայմանագրեր եւ վարկային կազմակերպության ծրագիր մուտքագրելով իրականությանը չհամապատասխանող տվյալներ՝ իրեն վստահված «Փարվանա-Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպության Սեւանի մասնաճյուղի դրամարկղից յուրացրել է ավելի քան 8 միլիոն դրամ:

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերով հարուցվել է քրեական գործ, որն ուղարկվել է քննչական կոմիտե:

**Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ**

# Բնակարանային գողությունը բացահայտվեց



Մարտի 9-ին ոստիկանության Արարատի բաժին դիմած տղամարդը հաղորդում տվեց, որ մարտի 7-ին փակել էին Նոյակերտ գյուղի իրենց տան դռներն ու երկու օրով մայրաքաղաք մեկնել: Վերադառնալով՝ տեսել էին, որ տան դուռը բաց է, համակարգիչը, հեռուստացույցն ու 304 հազար դրամը չկան:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ-քննչական խումբն արձանագրեց՝ դուռը հարմարեցված բանալիով էին բացել: Պարզվեց, որ նկուղից էլ գողացել էին մեքենայի գազաբալոն, մի քանի տասնյակ լիտր գինի եւ օղի, իսկ բակում կայանված մեքենայից՝ որոշ պահեստամասեր:

Բնակարանային գողության հատկանիշներով քրեական գործ հարուցվեց: Ոստիկանության Արարատի բաժնի քրեական հետախույզները երկօրյա օպերատիվ-հետախուզական միջոցառումներով բացահայտեցին հանցագործությունը: Մարտի 11-ին նրանք Երեւանում հայտնաբերեցին իրենց օպերատիվ տեսադաշտում հայտնված Նարեկ Ղավալյանին ու բերման ենթարկեցին ոստիկանության Արարատի բաժին: Մայրաքաղաքի բնակիչ, 22-ամյա երիտասարդը ներկայացվեց դեպքի նախաքննությունը վարող մարմնին:

Գողոնի մի մասը հասցրել էր վաճառել, իսկ համակարգիչն ու գումարը վերադարձվել են տուժողներին:

Կատարվում է քննություն:

# Բացահայտումներ Արմավիրում



Մարտի 10-ի առավոտյան ոստիկանության Արմավիրի բաժնում հաղորդում ստացվեց, որ քաղաքի Երեւանյան փողոցի վճարային տերմինալը գողացել են: Նախնական տվյալներով՝ տերմինալում 380 հազար դրամ կար: Պարզվեց, որ տերմինալը գողացել են գիշերը, ժամը 4.30-ի սահմաններում:

Հետախուզական միջոցառումների արդյունքում Արմավիրի ոստիկանները տվյալներ ստացան, որ գողությունը կատարել են երեք հոգի: Նրանց ինքնությունը ճշտելու միջոցառումները քրեական հետախույզներին բերեցին Լենուղի գյուղ: Պարզվեց, որ կասկածվողներից երկուսը՝ 17-ամյա Սարգիսն ու Գագիկը, գյուղի դպրոցի աշակերտներ են: Նրանք ներկայացվեցին ոստիկանության Արմավիրի բաժին: Հայտնաբերվեց ու բաժին բերման ենթարկվեց նաեւ երրորդ կասկածվողը՝ 21-ամյա Սարգիս Աբելյանը: Արմավիրի ոստիկանների տեղեկությունները հիմնավոր էին. Արաքս գյուղից Արեւադաշտ տանող ճանապարհի հարեւանությամբ անցնող ջրատարում հայտնաբերվեց գողացված տերմինալը՝ կոտրված:

Հետախուզական միջոցառումները շարունակվեցին, որոնց արդյունքում եռյակի մասնակցությամբ նոր դեպքեր բացահայտվեցին: Փետրվարի 18-ին «Հարավկովկասյան երկաթուղու» Արմավիրի կայանից հափշտակել էին 41 հազար դրամ եւ բջջային հեռախոս: Տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին Արմավիրի Շահումյան, Չարենցի եւ Հանրապետության փողոցներում գործող ԱՊՊԱ գրասենյակների դռները, սակայն փող չէին գտել: 15 հազար դրամ էին հափշտակել Հանրապետության փողոցի խաղային ապարատից՝ երկաթե ձողով դրամատուփը կոտրելով: Մի քանի անգամ մտել էին Շահումյան փողոցի թերթի կրպակ: Երկու դեպքում գողացել էին փող եւ ծխախոտ, մյուս դեպքերում փող չէին գտել: Տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին նաեւ Սարդարապատ գյուղի մթերային խանութներից մեկի դուռը եւ գողացել 120 հազար դրամ, ծխախոտ ու գարեջուր: Ցանկացել էին գողանալ Նորապատ գյուղում տեղադրված վճարային տերմինալը, սակայն կաշկանդվելով ճանապարհի երթեւեկից՝ գործն ավարտին չէին հասցրել:

Կատարվում է քննություն:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# «Խնամիական» պարտք ու պահանջ



Դիլիջանցի Սվետլանա Ավետիսյանը ֆինանսական խնդիրների պատճառով անելանելի վիճակում էր: Պարտքով գումար վերցնելու փորձերը մատնվեցին անհաջողության: Ստիպված էր տոկոսով փող ճարել: Այս հարցում նրան օգնության հասավ աղջկա սկեսուրը՝ Նունե Սիմոնյանը: 650 հազար դրամ տվեց, որի դիմաց ամիսներ շարունակ ստացավ տոկոսներ:

Սվետլանան Նունեին վճարեց 2 միլիոն 369 հազար դրամ, իսկ մայր գումարն ամբողջությամբ դեռ չէր վճարել: Տոկոսի բեռի տակ էլ որոշեց դիմել բանկերից մեկի օգնությանը: Իր անունով գումար վերցնել չկարողանալով՝ Նունեին խնդրեց օգնել: Նրա անունով ձեւակերպեց 600 հազար դրամ վարկ: Եվ քանի որ 300 հազար դրամ էլ էր անհրաժեշտ, դարձյալ Նունեի անունով մեկ այլ բանկից վերցրեց վերոհիշյալ գումարը: Սվետլանան Նունեից վերցրած գումարի մի մասը վերադարձրեց, իսկ մնացածի պարտավորությունները շարունակում էր կատարել: Նունեն տեսնելով, որ Սվետլանան վարկը տրտնջալով է մարում՝ զայրացավ: Որոշեց գնալ եւ պահանջել, որ շտապ եւ միանվագ վճարի բանկի գումարը: Դուռը նրա առաջ, սակայն, բացող չեղավ: Ոտքով հարվածեց դռանը՝ վնասելով փականը, հետո կոտրեց ապակին:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Դիլիջանի բաժնի աշխատակիցները:

Նյութերի նախապատրաստման ընթացքում կողմերը բացատրություններ տվեցին: Նունե Սիմոնյանի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 213 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցարարք՝ վաշխառություն:

Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

# Անպատասխանատուն



**Վահրամ Նահապետյանը փեսայի՝ Արմեն Մարությանի հետ նրա մեքենայով ուղեւորվեց Նոր Նորք: Ճանապարհին Վահրամը Արմենին ասաց, որ ուզում է հանդիպել նախկին կնոջը եւ խնդրեց, որ մեքենան կարճ ժամանակով տրամադրի իրեն: Նախկին կնոջ տունը մոտակայքում էր: Արմենը Նոր Նորքի սուպերմարկետի մոտ իջավ մեքենայից, իսկ Վահրամը հավաստիացրեց, որ շուտով կվերադառնա:**

**Կես ժամ սպասելուց հետո Արմենը զանգեց Վահրամին: Զանգերը սկզբում անպատասխան էին, հետո բաժանորդը դարձավ անհասանելի:**

**Արմենը ստիպված տուն վերադարձավ ու շարունակեց զանգել Վահրամին: Բաժանորդը դարձյալ անհասանելի էր: Աներորդու անպատասխանատվությունից զայրացած՝ որոշեց կատարվածի վերաբերյալ հաղորդում տալ ոստիկանության Նոր Նորքի բաժնում:**

**Կեսգիշերին Հանրապետության հրապարակից, մեքենայով հանդերձ, Վահրամ Նահապետյանը բերման ենթարկվեց:**

**Պարզվեց՝ նախկին կնոջը հանդիպել չկարողանալով՝ նեղսրտել էր ու մոռացել թե՛ մեքենայատիրոջ, թե՛ մեքենան վերադարձնելու մասին:**

**Դիմողի բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:**

**Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ**

# Ամեն ինչ՝ զենքի մասին

Քաղաքացիական անձանց «զինելու» օրենսդրությունը կիրառվում է՝ հիմնականում հաշվի առնելով տվյալ երկրի քաղաքացիների վերաբերմունքը օրենքներին: Օրինակ՝ Մեքսիկայում հարցը կարգավորվում է երկրի հիմնական օրենքով՝ Սահմանադրությամբ:

Հրազեն ձեռք բերելու եւ պահելու հարցը վերահսկվում է իրավապահ մարմինների կողմից: Այն երկրներում, որտեղ հրազեն կրելու ավանդույթները ձեւավորվել են 19-րդ դարասկզբին (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա), ներկայումս իշխանությունները որդեգրել են քաղաքացիական անձանց «զինաթափելու» մարտավարություն: Հատկապես Մեծ Բրիտանիայում շատ վճռական են տրամադրված:



Կան երկրներ, որտեղ քաղաքացիները իրավունք չունեն զենք ձեռք բերել եւ պահել: Օրինակ՝ Ճապոնիայում հրազեն կրելու իրավունք ունեն միայն իրավապահները եւ երկրի պաշտպանության ծառայողները: Արգելված է անգամ կրել արտաքնապես հրազեն հիշեցնող իր: Օրենքն արգելում է նաեւ ատրճանակների մակետային տարբերակների վաճառքը:

Ճապոնիայի օրենքը խստիվ արգելում է որսորդական հրացանն ինքնապաշտպանության նպատակով օգտագործելը: Որսորդական օդամղիչ հրացանների համար անհրաժեշտ է հասարակական անվտանգության հանձնաժողովի թույլտվությունը: Զենք կրելու սահմանափակումներն այս երկրում համարում են ճիշտ քաղաքականություն:

Օրենքը խախտելու համար քաղաքացին կարող է դատապարտվել ազատազրկման՝ մեկից տասը տարի ժամանակով, իսկ կիրառման դեպքում՝ երեք տարուց մինչեւ ցմահ ազատազրկում: Ճապոնիայի ոստիկանության կողմից տարեկան առգրավվում է շուրջ երկու հազար միավոր զենք: Զենքի ապօրինի շրջանառության համար նախատեսված պատասխանատվությունը տարածվում է նաեւ երկրի սահմաններից դուրս. այլ երկրի տարածքում նման հանցագործություն կատարելու համար Ճապոնիայի քաղաքացուն հայրենիքում սպառնում է մինչեւ հինգ տարի ազատազրկում:

Զենք կրելու, ձեռք բերելու եւ պահելու սահմանափակումները տվել են իրենց դրական արդյունքը. Ճապոնիայում հրազենի գործադրմամբ կատարված սպանությունները 4,1% են:

Հարյուր քսան միլիոն բնակչություն ունեցող Ճապոնիայում տարվա կտրվածքով հրազենի գործադրմամբ կատարված քրեական պարզաբանումների դեպքերը չեն գերազանցում երկու հարյուրը: Սակայն կան երկրներ, որոնք միջազգային կառույցների կողմից ճանաչվել են վտանգավոր հենց տվյալ երկրի քաղաքացիների զինվածության պատճառով: Առաջին հորիզոնականներում են Լիբիան, Սոմալին, Աֆղանստանը, Պակիստանը, Շրի Լանկան, Եմենը, Հայիթին:

Չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ մեր բնակչության մոտ դեռ բավական ապօրինի զենք եւ զինամթերք կա: Ոմանց համար զենք ունենալը «արժանապատիվ» գործ է: Նրանք չեն ցանկանում զրկվել այդ զենքից: Իսկ երբ այդ նույն զենքի գործադրմամբ տեղի է ունենում անուղղելին, նոր միայն գիտակցում են՝ ինչ են արել:

Ոստիկանության ղեկավարության ամենօրյա ուշադրության կենտրոնում են զենքի եւ ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերման աշխատանքները: Տարվա ընթացքում մի քանի անգամ անցկացվում են համալիր կանխարգելիչ միջոցառումներ: Ոստիկանության աշխատակիցների ամենօրյա բացատրական աշխատանքների շնորհիվ առաջընթաց է նկատվում բնակչության կողմից զենքի եւ զինամթերքի կամավոր հանձման գործում:

Մեր հանրապետությունում զենքի արտադրման արտոնագիրը տալիս է կառավարությունը, իսկ առեւտրի արտոնագիրը՝ ոստիկանությունը:

Քաղաքացիական զենք ձեռք բերելու իրավունք ունի 18 տարին լրացած քաղաքացին՝ ոստիկանությունից զենքի որոշակի տեսակ ձեռք բերելու համար թույլտվություն ստանալուց հետո:

**Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ**

# Չվարձալի ամփոփագիր

## Սրբապղծություն

56-ամյա մի տղամարդ հաղորդում է տվել, որ մոր հոգեհանգստի արարողության ժամանակ, օգտվելով իր զբաղվածությունից, տնից գողացել են իր եւ մոր բանկային քարտերը՝ ծածկագրերով, իսկ ավելի ուշ հաշվեհամարից կանխիկացրել են համապատասխանաբար՝ 25 հազար եւ 36 հազար դրամ:



## Ազնիվ արարք

Գիշերվա երեքին ահազանգ է ստացվել 31-ամյա մի տղամարդուց: Հայտնում էր, որ ծեծել է կնոջը եւ խնդրում էր ոստիկան ուղարկել:

Ուղարկել էին: Պարզվել էր, որ տղամարդը, գտնվելով ոչ սթափ վիճակում, կենցաղային հարցի շուրջ վիճաբանել է կնոջ հետ, ձեռքերով եւ ոտքերով խփել նրան: Հետո, սթափվելուն զուգահեռ, զարթնել էր նաեւ խիղճը...

## Նպաստավոր պայմաններ

Գիշերվա երեքին մոտ ոստիկանություն զանգած կինը հայտնում էր, որ վերջին երկու ժամվա ընթացքում, օգտվելով երկրորդ հարկի տան պատշգամբի դուռը բաց լինելու հանգամանքից, բնակարանից գողացել են նոթբուք, վերարկուի գրպանից՝ դրամապանակ եւ Բուդդայի արձանիկ:

Հաղորդում է ստացվել նաեւ մի քաղաքացուց, որ մտել ու թալանել են ամբողջ տունը: Պարզվել է, որ տան բանալին դրված է եղել դռան շեմին փռած շորի տակ: Իսկ «ամբողջ տունը թալանել են» ասելով՝ տանտերը նկատի է ունեցել «Արարատ» եւ «Մանե» տեսակի կոնյակներն ու արծաթյա վզնոցը: Ընդհանուր վնասը 25 հազար դրամի է:

## Տնօրենը մերկ է

Ոստիկանությունում ՍՊԸ տնօրենը հաղորդում է տվել, որ սոցցանցի միջոցով ծանոթացել է «Կասանդրա» անվամբ օգտատիրոջ հետ, որը շփման ընթացքում խաբեությամբ իրենից ստացել է իր մերկ լուսանկարներն ու տեսահոլովակը եւ դրանք համացանցում չհրապարակելու դիմաց պահանջել 600 անգլիական ֆունտ ստեռլինգ: Բանակցությունների արդյունքում տնօրենն ուղարկել է միայն 200 դոլար: Առայժմ՝ 200 դոլար: Պահանջները շարունակվում են:

## Օղին խփել էր գլխին

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ քունքոսկրի բաց կոտրվածքով, գլխուղեղի ցնցումով բուժօգնության է բերվել 26-ամյա մի երիտասարդ:

Պարզվել է՝ 36-ամյա Արմենն է վիճաբանության ժամանակ օղու շշով հարվածել նրա գլխին: Կարելի է միայն ենթադրել, թե ինչ է նախորդել վեճին:

Արմենը բերման է ենթարկվել բաժին, տվել խոստովանական բացատրություն եւ բաց թողնվել:

## Փոշմանել էր

Ոստիկանություն է զանգել 28-ամյա Նազելին եւ հայտնել, որ իր ծանոթ Սուրենը եկել է իրենց տուն, հետ պահանջել իր նվիրած վզնոցը եւ հինգ հազար դրամը: Սա դեռ ոչինչ. նաեւ մահճակալի վրայից գողացել է իր բջջային հեռախոսը:

## Համացանցի վտանգները

Ոստիկանության ծառայողները, թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով, բերման են ենթարկել երկու երիտասարդի: Նրանցից մեկի մոտից հայտնաբերվել է կաթուցիչ՝ մարիխուանա թմրամիջոցով: Նա հայտնել է, որ գնել է սոցցանցի «Բառից.ամ» օգտատիրոջից:

## www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ մարտի 14-ից 21-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 25 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ կողոպուտի, 2-ը՝ գողության, 4-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ դասալքության համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 9 հետախուզվող:

Արձանագրվել է 78 ճանապարհատրանսպորտային պատահար. 3 մարդ զոհվել է, 115-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 14 դեպք. 2 մարդ զոհվել է, իսկ 13-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

## Հանրապետության ճանապարհներին

Մարտի 18-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենան Երեւանի Բագրատունյաց փողոցում բախվել է կայանված «ԿամԱԶ» մակնիշի ավտոմեքենայի. «Օպել»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Նույն օրը, նշված վայրում մեկ այլ «Օպել» մակնիշի ավտոմեքենա բախվել է վերոհիշյալ «Օպել»-ին:

■

Մարտի 18-ին Երեւանի Նուբարաշենի 11-րդ փողոցում իրար են բախվել «Ռենո» մակնիշի ավտոմեքենա եւ «ԻԺ» մոտոցիկլետ. մոտոցիկլիստը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 18-ին Երեւանի Երեւանյան փողոցում իրար են բախվել «Տոյոտա», «Ֆորդ», «Օպել» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի եւ «Մերսեդես»-ի վարորդները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մարտի 18-ին Երեւանի Գայի եւ Մյասնիկյան պողոտաներն իրար միացնող էստակադայի վրա իրար են բախվել «Հունդայի» ավտոբուսը եւ «Տոյոտա», «Հունդայի» մակնիշի ավտոմեքենաներ. «Տոյոտա»-ի վարորդը եւ ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մարտի 18-ին Արմավիրի մարզի Քարակերտ գյուղում իրար են բախվել «Օպել» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի 26-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 18-ին «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենան Դրախտիկ-Ճամբարակ ճանապարհի 2,6-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ շրջվել. վեց ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մարտի 18-ին «Ռենո» մակնիշի ավտոմեքենան Մայիսյան կամուրջ–Նոյեմբերյան ճանապարհի 10-րդ կմ-ին բախվել է «Հոնդա» մակնիշի ավտոմեքենայի. «Ռենո»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 19-ին Երեւանի Ազատամարտիկների փողոցում «Նիսան» մակնիշի ավտոմեքենան բախվել է կայանված «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենայի. «Նիսան»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 19-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Գյուրջյան եւ Բաղյան փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել 86-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 19-ին «ԳԱԶ-3102» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղում վրաերթի է ենթարկել 17-ամյա երկու քաղաքացիների եւ իր մեքենայով տեղափոխել հիվանդանոց:

■

Մարտի 19-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասում վրաերթի է ենթարկել 72-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մարտի 19-ին «ՎԱԶ-217230» մակնիշի ավտոմեքենան Եղվարդ քաղաքի Շիրակի փողոցում դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ ընկել Արզնի-Շամիրամ ջրանցքը. վարորդը եւ երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մարտի 19-ին «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Մեղրի ճանապարհի 103-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել. ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

## Գովազդի հնարքները



***Մարդկությունը անցում է կատարում դեպի տեղեկատվական քաղաքակրթություն. ընդլայնվում են տեղեկատվական հոսքերի եւ տեղեկատվական միջավայրի մասշտաբները եւ բարդացվում է դրանց բովանդակությունը՝ էապես մեծացնելով մարդու հոգեկանի վրա դրանց ներգործության աստիճանը:***

Ժամանակակից բարձր տեխնոլոգիաների սրընթաց զարգացման աշխարհում բոլոր քիչ թե շատ լուրջ հաստատություններն ու կազմակերպություններն ունեն գովազդի մասնագետներ, որոնք ստեղծում են նոր մեթոդներ եւ ուղղություններ՝ ապրանքը շուտափույթ եւ շահավետ վաճառելու նպատակով: Գովազդի հոգեբանությունը հոգեբանության առանձին բաժին է, որը զբաղվում է մարդկանց պահանջմունքների եւ սպասելիքների գնահատմամբ, մշակում է մարդկանց վրա ներգործելու հոգեբանական միջոցներ եւ մեխանիզմներ՝ նպատակ հետապնդելով ստեղծել պահանջարկ՝ վաճառքի ենթակա ապրանքների համար: Այն անմիջականորեն ծառայում է մարդկային մղումներից թերեւս ամենակարեւորի՝ տիրելու տենչանքի իրականացմանը: Չենք սխալվի՝ պնդելով, որ գովազդի ներգործության հետեւանքով մարդը փորձում է տիրանալ սննդի, որոշակի նյութական արժեքների, սեռական զուգընկերների, հոգեւոր արժեքների, տեղեկատվության եւ այլն:

Գովազդի ծառայություններից չափից ավելի օգտվող մարդու մեջ ձեւավորվում է առանձնահատուկ հոգեկան վիճակ, որի դեպքում բնորոշ է ցածր ինտելեկտուալ ակտիվությունը, երբ ցանկացած մտավոր ճիգ առաջացնում է անհարմարավետության զգացում: Ժամանակի հետ նա աստիճանաբար կորցնում է շրջակա միջավայրի երեւույթները համարժեք գնահատելու ունակությունը, ձեռք է բերում դիրեկտիվ ու ռեգլամենտային տեղեկատվությունը պատրաստակամությամբ ընդունելու միտում: Այս ամենի հետեւանքով ձեւավորվում է արատավոր շրջան, երբ ձեւախախտված հոգեկանը չի կարողանում համապատասխան կապեր հաստատել շրջակա միջավայրի հետ, ինչի հետեւանքով հոգեկան կառուցվածքը դառնում է ավելի պասիվ եւ անգործունյա:

Գաղտնիք չէ, որ գովազդի մեջ լայնորեն կիրառվում են հիպնոսի տարրեր: Նեյրոլեզվաբանական ծրագրավորման ժամանակակից տեխնիկան թույլ է տալիս ոչնչացնել առկա հոգեկան դիրքորոշումները եւ փոխարինել դրանք նորերով, ինչը նույնպես լայն տարածում ունի ժամանակակից գովազդի շուկայում, որտեղ հաճախ տեղեկատվության խեղաթյուրումների վրա հիմնված տարրական սուտը, ինչպես եւ անհիմն չափազանցությունները մատուցվում են իբրեւ բացարձակ ճշմարտություն:

Գովազդով զբաղվող մասնագետների կողմից լայնորեն կիրառվում է AIDA կամ AIMDA բանաձեւը, որը կարելի է ներկայացնել հետեւյալ կերպով՝ Attention-ուշադրություն, Interest-հետաքրքրություն, Motive-դրդապատճառ, Desire-ցանկություն, Activity-ակտիվ գործունեություն: Բանաձեւի հետ միաժամանակ անցկացվում է որոշակի ներշնչական միջոցառում, ինչի հետեւանքով սպառողին ներշնչվում է տիրելու պատրանքը: Քաջատեղյակ լինելով, որ գովազդի արդյունավետությունը էապես աճում է այն սպառողին քնկոտ վիճակում հրամցնելու դեպքում, գովազդատուները ջանում են ներկայացնել հատկապես երեկոյան ժամերին:

Գովազդի հիպնոսը սկսվում է նրանից, որ այն փորձում է մարդու տեսադաշտում զբաղեցնել գերիշխող դիրք: Օրինակ՝ գովազդային պաստառները տեղակայվում են բարձրադիր կետերում, բարձրահարկ շենքերին, մետրոպոլիտենում՝ գնացքների ապակիներին, բնակելի շենքերի վրա եւ այլն: Գովազդն առավել նպաստավոր է այն վայրերում, ուր դրան չեն սպասում:

Ուշադրություն գրավելու եւ հետաքրքրություն առաջացնելու փուլերը իրականացվում են գովազդային շարքի՝ մարդու աչքի համար անսովոր լինելու հանգամանքի շնորհիվ, երբ սպառողը կարծես ընկնում է «մեղմ շոկի» կամ «սուր զարմանքի» մեջ: Արդյունավետ է գործում նաեւ գեղեցիկ խայտաբղետությամբ «գերելու» մեթոդը, երբ գովազդը համեմվում է վառ եւ արտասովոր գույներով:

*Շարունակելի*

## Շաբթայ Կալմանովիչի գործը

Ռուսաստանի քննչական կոմիտեն անդրադարձել է 2009 թ. նոյեմբերի 2-ին անհայտ անձանց կողմից սպանված Շաբթայ ֆոն Կալմանովիչի սպանությանը: Կալմանովիչը ռուս-իսրայելական երկքաղաքացիությամբ գործարար էր, Ռուսաստանի «Սպարտակ» կանանց բասկետբոլային ակումբի սեփականատեր, շոու բիզնեսի պրոդյուսեր: Քրեական գործի կապակցությամբ քննիչները պատրաստվում են հարցաքննել Քսենյա Սոբչակին, Անաստասիա Վոլոչկովային, Ֆյոդոր Բոնդարչուկին եւ այլոց: Ոմանք Կալմանովիչին համարում են ՊԱԿ-ի եւ իսրայելական հետախուզության՝ «Մոսադ»-ի գործակալ, որը կազմակերպել է աֆրիկյան երկրներից ադամանդների մաքսանենգ տեղափոխումը, նույնիսկ համարում են «օրենքով գող» Յապոնչիկի սպանության պատվիրատու:

2009 թ. նոյեմբերի 2-ին, ժամը 16-ի մոտերքը, Մոսկվայում 61-ամյա Շաբթայ ֆոն Կալմանովիչի «Մերսեդես S-500»-ին հավասարվեց արծաթափայլ «Լադա Պրիորա»-ն, որից մարդասպանները կրակ բացեցին գործարարի եւ նրա վարորդի վրա: Կալմանովիչը մահացավ տեղում, իսկ ծանր վիրավորված վարորդը կարողացավ ընթանալ երեք կիլոմետր եւ փրկվել:

Հետաքննությունը պարզեց, որ մարդասպանները կրակել են երկու ավտոմատ-գնդացիրներից: Հանցանքի վայրում հայտնաբերվել էր 9 մմ տրամաչափի 19 պարկուճ: Հարձակման համար այնպիսի վայր էին ընտրել, որտեղ չկային տեսագրող սարքեր:

Հետաքննության ժամանակ պարզվեց, որ մեքենայում կար 1,5 միլիոն դոլար, բայց հանցագործները նույնիսկ չէին փորձել փողը վերցնել: Ուրեմն բացառվում էր ավազակային հարձակման տարբերակը: Հանցագործների թիրախը Կալմանովիչն էր:

Գործարարի սպանության հետաքննությունը տեւեց մեկ տարի, ինչից հետո քրեական գործը կասեցվեց, քանի որ հնարավոր չէր եղել պարզել մարդասպանների ինքնությունը եւ հայտնաբերել նրանց:



Կալմանովիչի սպանությունը ժամանակի աղմկահարույց հանցագործություններից էր, քանի որ նա Մոսկվայի ազդեցիկ դեմքերից էր:

Շաբթայ Կալմանովիչը ծնվել էր 1947 թ. դեկտեմբերի 18-ին, Լիտվայում: Հայրը գործարանի տնօրեն էր, մայրը՝ միսկոմբինատի գլխավոր հաշվապահը: Կալմանովիչը մասնագիտությամբ ճարտարագետ էր: 1971 թ. ընտանիքի հետ մշտական բնակության էր մեկնել Իսրայել, որտեղ ավարտել էր համալսարանը եւ զբաղվել բիզնեսով: Ենթադրվում է, որ այդ ժամանակից սկսած՝ համագործակցել է խորհրդային անվտանգության մարմինների հետ:

Որոշ ժամանակ անց Կալմանովիչը մեկնում է Հարավային Աֆրիկա եւ մասնակցում մի շարք բիզնես նախագծերի, այդ թվում՝ «Սան Սիթի» խաղատան կառուցմանը:

1980-ական թթ. Կալմանովիչն արդեն միլիոնատեր էր: Ենթադրվում է, որ միլիոնների զգալի մասը վաստակել էր ադամանդների մաքսանենգ վաճառքից: Նա «ջերմ» հարաբերություններ ուներ ադամանդի մեծ պաշարներ ունեցող Բոթսվանայի եւ Սիերա Լեոնեի այն ժամանակվա ղեկավարների հետ:

Կալմանովիչը մեծ հեղինակություն էր վայելում Իսրայելում, ուստի անսպասելի էր 1988 թ. նրա ձերբակալությունն այնտեղ: Բիզնեսմենը մեղադրվում էր ԽՍՀՄ-ի օգտին լրտեսության մեջ: Ձերբակալության վերաբերյալ կան տարբեր տեղեկություններ. ոմանք ընդունում էին, որ նա միաժամանակ աշխատել է խորհրդային անվտանգության, մյուսները՝ իսրայելական մեկ այլ հակահետախուզական ծառայության՝ «Շին-բեթի» համար: Մինչ օրս այս հարցը մնում է չբացահայտված:

1993 թ. Կալմանովիչին պատժաժամկետից շուտ ազատ արձակեցին: Նրա համար միջնորդել էին աշխարհի շատ հեղինակավոր հրեաներ: Բանակցություններին մասնակցել էին Իոսիֆ Կոբզոնը եւ Ռուսաստանի այն ժամանակվա փոխնախագահ Ալեքսանդր Ռուցկոյը:

Ազատվելուց հետո Կալմանովիչը տեղափոխվեց Ռուսաստան եւ Իոսիֆ Կոբզոնի հետ կազմակերպեց կոսմետիկայի եւ օծանելիքի վաճառքով զբաղվող մի քանի ընկերություն: Լայն գործունեություն ծավալեց, զգալի գումարներ ներդրեց Տիշինյան շուկայի վերակառուցման համար:

***Շարունակելի***

Պատրաստեց **ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

# Քրեական օրենսգիրք. սպանություն

***Քրեական օրենսգիրքն առանձնացնում է սպանության երեք տեսակ՝ հասարակ սպանություն, երբ բացակայում են մեղմացուցիչ եւ ծանրացուցիչ հանգամանքները. այն նախատեսված է քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, պատիժը 8-15 տարի ժամկետով ազատազրկումն է, ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն, որը նախատեսված է նույն հոդվածի 2-րդ մասով, իսկ պատիժը 12-20 տարի ժամկետով ազատազրկումն է կամ ցմահ դատապարտումը: Ծանրացուցիչ հանգամանքներ են, օրինակ՝ ակնհայտ հղի կնոջ սպանությունը, առանձին դաժանությամբ սպանությունը, մի խումբ անձանց կողմից կատարված սպանությունը, շահադիտական դրդումներով սպանությունը, երկու կամ ավելի անձի սպանությունը եւ այլն:***

***Մեղմացուցիչ հանգամանքներում կատարված սպանությունները նախատեսված են քրեական օրենսգրքի 105-ից 108-րդ հոդվածներով՝ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում սպանություն, մոր կողմից նորածին երեխայի սպանություն, հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ սպանություն եւ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանություն:***



Սպանության որակման համար նշանակության ունեցող հանգամանքների թվում անհրաժեշտ է դիտարկել շարժառիթը, նպատակը, սպանությունը կատարելու պահին անձի հուզական վիճակը: Օրենքը, ճիշտ է, ոչ բոլոր դեպքերում է շարժառիթը դիտարկում որպես սպանությունը որակելու հատկանիշ, այնուամենայնիվ, դիտավորության տեսակի հարցում շարժառիթը խորությամբ ուսումնասիրելը արարքի որակման համար էական նշանակություն ունի:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ամենադժվարը մարդասպանների տիպերի բացահայտումն է, քանի որ բազմազան են սպանության շարժառիթները, դրդապատճառները՝ խուլիգանական դրդումներ, շահ, վրեժ, խանդ, վախ եւ այլն:

Սպանության յուրահատկությունը, իբրեւ հանցատեսակ, ոչ միայն հանցավոր գործունեության բովանդակության մեջ է, այլեւ՝ սուբյեկտիվ պատճառների: Եղել են դեպքեր, երբ հանցագործն իր արարքը բնութագրել է որպես՝ «պատվի հարց» լուծել: Ասվածի օրինակ է Աջափնյակի վարչական շրջանում կատարվածը:

Կեսգիշերն անց 16-րդ թաղամասի այգում երկու տղամարդու վեճն ավարտվեց դանակահարությամբ: Իսկ րոպեներ անց մոտակա շենքի բնակիչները ոստիկանություն զանգեցին. այգում վիզը կտրած տղամարդ կա: Ահազանգը ստանալուն պես ոստիկանության Մաշտոցի բաժնի աշխատակիցները դեպքի վայր մեկնեցին: Տեղում էր նաեւ «շտապօգնության» բրիգադը: Պարանոցի, կրծքավանդակի, վերին վերջույթների բազմաթիվ կտրած-ծակած, արնահոսող վերքերով երիտասարդին բժիշկներն անհապաղ հիվանդանոց հասցրին: Օպերատիվ խմբի մի մասը «շտապօգնության» բրիգադի հետ հիվանդանոց մեկնեց, մյուսները մնացին այգում՝ տարածքն ուսումնասիրելու, ականատես վկաներ հայտնաբերելու:

Դանակահարվածը հիվանդանոցում մահացավ: Դեպքի վայրից հայտնաբերվեց նրա հեռախոսը, որի ստուգմամբ պարզվեց, որ վերջին հեռախոսազրույցն ունեցել էր վանաձորցի Վաղինակ Դերձյանի հետ: Նա կասկածանքով բերման ենթարկվեց: Խոստովանեց. պատվի հարց էր լուծել, կնոջ պատվի հարցը:

Արձանագրվել են դեպքեր, երբ սպանությունը կատարվել է ոչ թե փողի, վրեժի կամ խանդի պատճառով, այլ չնչին առիթով: Այդպիսի դեպք գրանցվեց ոստիկանության Մալաթիայի բաժնում: Մեծարենցի փողոցի բնակչուհին հայտնում էր, որ որդուն կացնով սպանել են:

Ոստիկանները նշված հասցե մեկնեցին: Պարզվեց՝ մայրը գիշերային հերթափոխից տուն էր վերադարձել ու որդուն տեսել սպանված: Մոր հետ զրույցից հետո քրեական հետախույզների տեսադաշտում հայտնվեց կասկածյալը՝ սպանվածի ավագ եղբայրը: Ահազանգից ժամեր անց նա հայտնաբերվեց: Խոստովանեց: Չնչին առիթներով եղբոր հետ հաճախ էին վիճում, իսկ այդ օրվա վեճը ողբերգական ավարտ էր ունեցել:

Ողբերգական ավարտ ունեցավ նաեւ գործիցի երկու երիտասարդների՝ չնչին առիթով սկսված վեճը: Նախ հեռախոսով էին վիճել, հետո հանդիպել էին Որոտան համայնքում: Անհեթեթ վեճն ուղեկցվել էր ծեծկռտուքով ու ավարտվել դանակահարությամբ: Մայիս Հակոբյանը դանակահարել էր Ռոմիկ Օհանջանյանին. որովայնի կտրած-ծակած վնասվածքներով հիվանդանոց տեղափոխված երիտասարդը վիրահատության ժամանակ մահացել էր:

Անհեթեթ սպանության դասական օրինակ է ներկայացվող դեպքը

Մայրաքաղաքի բնակիչ Արա Սահրադյանը Հունաստանից հյուր ուներ՝ Տիգրան Նախշքարյան: Գնացել էին Սեւանա լիճ՝ ժամանակ անցկացնելու: Լողացել էին, հաց կերել, ալկոհոլ օգտագործել: Այդ ընթացքում նրանց էին մոտեցել Արայի ծանոթները: Հունաստանցի հյուրը, չգիտես ինչու, նրանց ներկայացել էր Հակոբ անունով: Քիչ անց իմանալով այդ մասին՝ նորածանոթները զայրացել էին: Խոսքից խոսք էր բացվել, եւ նրանցից մեկը՝ Անդրանիկ Հովեյանը, դանակահարել էր Տիգրան Նախշքարյանին: Ստացած մարմնական վնասվածքներից նա հիվանդանոցում մահացավ:

Սպանության դրդող շարժառիթ է վրեժխնդրությունը: Ընդհանրապես, վրեժը շատ հանցագործությունների պատճառ է դառնում, իսկ սպանությունների զգալի մասը կատարվում է հենց վրեժի հողի վրա:

Քաջարան քաղաքի Շահումյան փողոցում տղամարդու դիակ էր հայտնաբերվել: Բռնության հետքերն ակնհայտ էին: Կապանի ոստիկանները պարզեցին սպանվածի ինքնությունը՝ Քաջարանի բնակիչ Վալերիկ Մխիթարյանն էր:

Պարզվեց՝ կեսգիշերին նրան տնից դուրս էին կանչել: Կինը չէր տեսել կանչողին, ձայնն էլ անծանոթ էր եղել: Իսկ մոտ կես ժամ անց քաղաքի այլ մասի շենքերից մեկի բնակիչը տեսել էր արնաշաղախ տղամարդուն ու ահազանգել էր «շտապօգնություն» եւ ոստիկանություն:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հանցագործությունը բացահայտվեց: Սպանություն էր վրեժի հողի վրա, վրիժառուներն էլ Կապանի բնակիչներ էին:

Արտաշ Հակոբյանը, Միեր Մանուչարյանն ու Սասուն Կարապետյանը հայտնաբերվեցին Բագրատաշենի սահմանային անցակետում. ոստիկանների օպերատիվ գործողությունների շնորհիվ չհասցրին լքել հանրապետության տարածքը:

*Շարունակելի*

**Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Կողոպտիչները բացահայտվեցին



Սկիզբը՝ էջ 1

*62-ամյա տանտերը տեղափոխվել էր «Արտաշատ» բժշկական կենտրոն. վնասվել էր որովայնը:*

*Ոստիկանության Արարատի բաժնի ծառայողների օպերատիվ ու ճշգրիտ գործողությունների արդյունքում հանցագործությունը բացահայտվեց թարմ հետքերով: Նախ պարզեցին, որ հարձակվողները Լուսառատից հեռացել էին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով, որը կայանել էին թիրախ ընտրած տնից մի քանի հարյուր մետր հեռու: Գյուղում իրականացրած հետախուզական միջոցառումների արդյունքում փողոցում հայտնաբերեցին նաեւ դանակ:*

*Դեպքից կարճ ժամանակ անց Արարատի ոստիկաններին արդեն հայտնի էր հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձանց ինքնությունը: 34-ամյա Էդգար Եդիգարյանին հայտնաբերեցին Փոքր Վեդի գյուղից Լուսառատ տանող ճանապարհին: Մյուսին հայտնաբերելու միջոցառումներին միացան ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր եւ Արարատի մարզային վարչությունների ծառայողները: 35-ամյա Արմեն Աբրահամյանը հայտնաբերվեց Կոտայքի մարզում եւ, իր վարած «Մերսեդես»-ով հանդերձ, բերման ենթարկվեց ոստիկանության Արարատի բաժին: Ի դեպ, Արմեն Աբրահամյանը տուժողների համագյուղացին է, ավելին՝ նրանց տուն ելումուտ էր ունեցել: Նրա խուզարկությամբ հայտնաբերվեց դիմակ:*

*Էդգար Եդիգարյանը եւ Արմեն Աբրահամյանը կալանավորվել են:*

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Անասնագողությունների հետքերով



Մարտի 1-ին Արտաշատ քաղաքի մի բնակիչ ոստիկանության Արտաշատի բաժնում հայտնել էր, որ փետրվարի 28-ի ժամը 18.00-ից մարտի 1-ի ժամը 4.00-ն ընկած ժամանակահատվածում, օգտվելով դուռը կողպված չլինելու հանգամանքից, անասնագոմից գողացել են խոզ, իսկ հավաբնից՝ 7 հնդկահավ:

Ոստիկանության Արարատի մարզային վարչության եւ Արարատի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողությունը կատարել է Հայկաշեն գյուղի բնակիչ Արմեն Ս.-ն: Նա հայտնաբերվել եւ բերման է ենթարկվել ոստիկանություն եւ տվել ինքնախոստովանական ցուցմունք:

Հետագա միջոցառումներով պարզվել է, որ նախկինում եւս Արմեն Ս.-ն անասնագողություններ է արել: Մասնավորապես՝ փետրվարի 12-ի գիշերը Գայ գյուղի բնակիչ Նարեկ Խ.-ի հետ Վեդի քաղաքի մի անասնագոմի պատուհանի պոլիէթիլենային թաղանթը պատռելով՝ գողացել է ցլիկ, երկու հորթ, ոչխար եւ գառ:

Դեպքի առթիվ հարուցվել էր քրեական գործ:

Նարեկ Խ.-ն նույնպես բերման է ենթարկվել ոստիկանություն:

Պարզվել է նաեւ, որ փետրվարի 5-ի գիշերը Արմեն Ս.-ն եւ Նարեկ Խ.-ն, պատուհանի մետաղյա ցանցը պոկելով, Ավշար գյուղի մի բնակչի անասնագոմից գողացել են տասնհինգ ոչխար: Փետրվարի 19-ին Արբաթ գյուղի մի ֆերմայից գողացել են տասներկու ցլիկ:

Փետրվարի 28-ին էլ Վեդի քաղաքի մեկ այլ անասնագոմից Արմեն Ս.-ն հորթ էր գողացել:

Կատարվում է նախաքննություն:

**Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ**

# Թմրաշղթա



**Փետրվարի 27-ին քրեական հետախույզները ոստիկանության Էրեբունու բաժին բերման ենթարկեցին Երեւանի տարբեր վարչական շրջաններում ապրող ութ տղամարդու: Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության եւ Էրեբունու բաժնի ծառայողները համատեղ միջոցառումներով տվյալներ էին ստացել, որ նրանք զբաղվում են ապօրինի թմրաշրջանառությամբ: Բերման ենթարկվածներն ու մեքենաները խուզարկվեցին: Հայտնաբերված ափիոնի, հերոինի, մարիխուանայի նմանվող զանգվածները, թմրանյութի նմանվող հեղուկներով ներարկիչները, սրվակները, հոգեմետ դեղահաբերը ուղարկվեցին փորձաքննության:**

**Ոստիկանության Էրեբունու բաժնում քրեական գործ հարուցվեց, որն ուղարկվեց Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին: Նախաքննության ընթացքում եւս ձեռնարկվեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ու քննչական գործողություններ: Իրավապահները պարզեցին, որ մի խումբ անձանց, այդ թվում՝ բաժին բերման ենթարկված տղամարդկանցից հինգին բուսական եւ քիմիական բաղադրությամբ թմրամիջոցներ է իրացրել 32-ամյա Գեղամ Արզումանյանը: Հետագա միջոցառումներով իրավապահները պարզեցին նաեւ, թե նա ումից է իրացման նպատակով թմրամիջոցներ ձեռք բերում:**

**Էրեբունիում ապրող Արտակ Ոսկանյանը արդեն իսկ փետրվարի 27-ին հայտնաբերվել ու բերման էր ենթարկվել ոստիկանության Էրեբունու բաժին: Նրա խուզարկությամբ եւս թմրամիջոցներ էին հայտնաբերվել: Նա ստորագրությամբ բաց էր թողնվել:**

**Բացատրական աշխատանքի շնորհիվ Արտակ Ոսկանյանը ներկայացրեց 85 գրամ ափիոն՝ հայտարարելով, որ իրենն է: Ձեռնարկված հետագա միջոցառումներով իրավապահները պարզել են, թե նա ումից է ձեռք բերել ափիոնը:**

**Նախաքննությունը շարունակվում է:**

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Գրպանահատության սկսնակը

***Հափշտակության բազմաթիվ ձեւեր կան, բոլորն էլ քրեորեն դատապարտելի՝ անկախ որակական հատկանիշներից: Հանցավոր հակում ունեցողներից յուրաքանչյուրը մի տեսակի է նախապատվությունը տալիս: Մեկը բացահայտ հափշտակության կողմնակից է, մյուսը՝ գաղտնի, մեկը լավ «վազորդ» է, ու նրան հոգեհարազատ է կողոպուտը, մյուսի մատներն են առավել «աշխատունակ», նա էլ փայլում է գրպանահատության մեջ: Հափշտակության այս վերջին տեսակը նույնիսկ տարատեսակներ ունի: Միակ ընդհանրությունը դեպքի վայրի ընտրությունն է: Գրպանահատներն իրենց «լավ են զգում» հատկապես մարդաշատ վայրերում, հրմշտոցի, աշխույժ անցուդարձի մեջ, լեփ-լեցուն տրանսպորտում:***



Գրպանահատի թիրախ չդառնալու լավագույն միջոցը զգույշ լինելն ու որոշ կանխարգելիչ կանոնների հետեւելն է: Օրինակ, ցանկալի է, որ կանայք պայուսակի ընտրության հարցում նախապատվությունը տան դժվար խոցելի տեսակներին, պայուսակն էլ աչքի առաջ պահեն, տղամարդիկ էլ խուսափեն փողը տաբատի հետեւի գրպանում պահելուց:

Կարծում ենք՝ գրպանահատներից խույս տալու կանոնները հայտնի են բոլորին, սակայն շատերը թերահավատորեն են վերաբերվում դրանց, արդյունքում՝ ինքնավստահության գինը զգալի ու ցավոտ է լինում:

Որպես կանոն, գրպանահատներն իրենց հաշվին մի քանի դատվածություն են ունենում: Նրանց գերակշռող մասը ավագ սերնդի ներկայացուցիչ է, բայց ցավալին այն է, որ այս «արհեստը» փոխանցվում է նաեւ երիտասարդներին: Օրինակ, օրերս գրպանահատության կասկածանքով ոստիկանություն բերման ենթարկվածն անչափահաս էր:

Ժամը 18-ի կողմերն էր: Կոմիտասի պողոտայով ընթացող երթուղային ավտոբուսը հերթական կանգառն արեց: Ավտոբուսում ուղեւորները շատ չէին, կանգառը նույնպես սակավամարդ էր: Ասել է թե՝ գրպանահատության համար պայմաններն ամենեւին բարենպաստ չէին, բայց...

Ավտոբուս բարձրանալու պահին մի ուղեւորի «հարմար» պայուսակից պատանին թռցրեց դրամապանակը ու մյուս դռնից իջավ: Ամեն ինչ այնքան արագ ու հմտորեն կատարվեց, որ ուղեւորը, չնայած րոպե անց նկատեց կորուստը, բայց արդեն ուշ էր: Դրամապանակում վաթսունչորս հազար դրամ եւ բանկային քարտեր էին:

Սակավամարդ վայրում նման «գործ» հեղինակելն ամեն մեկի խելքի բանը չէր, ուստի հանցագործը կա՛մ չափից դուրս արհեստավարժ էր, կա՛մ, ընդհակառակը, սկսնակ, որին պարզապես բախտը ժպտացել էր: Տուժողից հաղորդում ստանալուց հետո այսպիսի եզրահանգման եկան ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի աշխատակիցները:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հիմնավորվեց երկրորդ վարկածը՝ գրպանահատը սկսնակ էր: Շուտով հանցագործությունը կատարելու կասկածանքով բերման ենթարկվեց տասնիհինգը նոր բոլորած Տիգրան Հովհաննիսյանը: Խոստովանեց: Նրա մատնանշած տեղից ոստիկանները գտան դրամապանակը: Բանկային քարտերը տեղում էին, իսկ փողը հասցրել էր ծախսել. կոշիկ, հագուստ, ծխախոտ, քաղցրավենիք էր գնել:

Տիգրան Հովհաննիսյանի ծնողները վերականգնել են տուժողին պատճառված նյութական վնասը: Պատանին ստորագրությամբ հանձնվել է նրանց հսկողությանը:

**Համիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Գողացել էին տերմինալը



*Մարտի 7-ի առավոտյան ոստիկանության Նոր Նորքի բաժնում գողության վերաբերյալ ահազանգ ստացվեց. գողություն էր կատարվել Լյուքսեմբուրգի փողոցի խանութից: Անմիջապես դեպքի վայր մեկնեց հերթապահող օպերատիվ խումբը:*

*Դեպքի վայրում իրականացված միջոցառումներով պարզվեց, որ անհայտ անձինք խանութի դուռը բացել էին տեխնիկական միջոցների գործադրմամբ ու գողացել վճարային տերմինալը:*

*Գողության պահը ֆիքսել էին խանութի տարածքը տեսահսկող սարքերը: Աշխատել էին նաեւ անվտանգության ձայնային եւ ծանուցող սարքերը, բայց մինչ խանութպանը կհասներ, հանցագործները հեռացել էին:*

*Տեսագրությունների ուսումնասիրմամբ ոստիկանները նկատեցին նաեւ, որ հանցագործությունը կատարած անձինք մի պահ անակնկալի են գալիս՝ տեսնելով տեսախցիկները: Բայցեւայնպես, սկսածն ավարտին են հասցնում:*

*Նոր Նորքի ոստիկանները ձեռնարկեցին օպերատիվ-հետախուզական ծավալուն միջոցառումներ՝ հանցագործությունը կատարած անձանց ինքնությունը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ: Արդյունքում՝ գողությունը բացահայտվեց: Նոր Նորքի ոստիկանները համագործակցեցին Երեւան քաղաքի վարչության եւ Էրեբունու բաժնի գործընկերների հետ եւ հայտնաբերեցին գողության մեջ կասկածվող անձին: Սարի թաղում բնակվող Գեւորգ Հովակիմյանը, իր վարած «ՎԱԶ-2109»-ով հանդերձ, բերման ենթարկվեց ոստիկանության Նոր Նորքի բաժին:*

*Մեքենայի խուզարկությամբ հայտնաբերվեց առանց գործարանային համարի ատրճանակ, իսկ բեռնախցիկում նկատելի էին գողացված վճարային տերմինալը անփույթ տեղավորելուց առաջացած հետքերը:*

*Նախաքննությունը շարունակվում է:*

# Բացահայտում են Արարատի ոստիկանները



Նախորդ ամիս ոստիկանության Արարատի բաժնի սպասարկման տարածքում անասնագողության հինգ դեպք գրանցվեց: Առաջին հաղորդումը փետրվարի 5-ին էր: Ավշար գյուղում գիշերը գողացել էին տասնհինգ ոչխար: Փետրվարի 12-ին էլ գողություն կատարվեց Վեդի քաղաքում. մի գոմից հափշտակել էին ցլիկ, երկու հորթ, տասնհինգ ոչխար եւ հինգ գառ: Միայն այս դեպքով տուժողին պատճառվել է 1 միլիոն 750 հազար դրամի վնաս: Փետրվարի 15-ին ոստիկանության Արարատի բաժնում անասնագողության վերաբերյալ եւս մի հաղորդում ստացվեց: Նոր կյանք գյուղի մի գոմից գողացել էին տասներկու հորթ: Հորթերի գողության մասին մի հաղորդում էլ ստացվեց փետրվարի 19-ին. Արբաթ գյուղում հափշտակվել էր ութ հորթ: Փետրվարի 28-ին դարձյալ հորթ էին հափշտակել Վեդի քաղաքում: Ոստիկանության Արարատի բաժնում անասնագողության վերաբերյալ հաղորդում ստացվեց նաեւ մարտի 1-ին. գողոնը խոզ ու հնդկահավ էր:

Անասնագողությունները բացահայտելու եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ ոստիկանության Արարատի բաժնի բոլոր ստորաբաժանումների ծառայողներից ձեւավորվեցին օպերատիվ խմբեր: Բացահայտման միջոցառումներին միացան նաեւ մարզային վարչության քրեական հետախույզները: Համատեղ աշխատանքի շնորհիվ պարզեցին, որ անասնագողությունները կատարել են նույն անձինք, որոնք Արմավիրի մարզի բնակիչներ են: Նրանց հայտնաբերելու միջոցառումները հանգուցալուծվեցին մարտի 2-ին: Արմեն Սիմոնյանին, Նարեկ Խաչատրյանին եւ Սուրեն Վարդանյանին Արարատի ոստիկանները հայտնաբերեցին Արմավիրի մարզում ու բերման ենթարկեցին բաժին:

Ձեռնարկվում են միջոցառումներ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ: Ոստիկանների տեղեկություններով՝ անասունները կամ վաճառվել են, կա՛մ մորթվել:

Հարուցվել է քրեական գործ:

# Բացահայտում են Սպիտակի ոստիկանները



Մարփի 10-ին ոսփիկանության Սպիփակի բաժնում կողոպուփի վերաբերյալ հաղորդում սփացվեց: Կփրել էին Սպիփակ-Վանաձոր ճանապարհին գփնվող պահեսփի դռան կողպեքի օղակներն ու մփել սարքավորումների պահեսփ: Սարքավորումները հափշփակելու նպափակով հանել էին ու փեղավորել մեքենաների մեջ: Տիրոջ որդին եւ թոռը նկափել էին նրանց ու մոփեցել, իսկ պահեսփ մփած անձինք մեքենաներով փախել էին՝ հափշփակելով մոփ մեկ միլիոն դրամի սարքավորումներ:

Ոսփիկանության Սպիփակի բաժնի քրեական հեփախույզները ժամերի ընթացքում պարզեցին պահեսփ մփած անձանց ինքնությունը: Երեւանի բնակիչ Էդգար Քարփաշյանը բերման ենթարկվեց ոսփիկանության Սպիփակի բաժին:

Բացափրական աշխափանքի շնորհիվ հանցակիցները՝ մայրաքաղաքի բնակիչներ Գագիկ Բաղդասարյանն ու Արթուր Մարգարյանը, մարփի 11-ին ներկայացան ոսփիկանության Սպիփակի բաժին:

Ձեռնարկված միջոցառումներով գողոնի մի մասը հայփնաբերվել է:

Հարուցվել է քրեական գործ:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Մարտյան գողություններ



Մարտի 12-ի առավոտյան ոստիկանության Դավիթաշենի բաժանմունք բերման ենթարկվեցին քրեական հետախույզների օպերատիվ տեսադաշտում հայտնված 30-ամյա Կարեն Ազոյանը՝ իր վարած «Ռենո» ավտոմեքենայով, եւ նրա երեք ուղեւորները: Ուղեւորներից մեկը 18-ամյա Հայկ Անտոնյանն էր, մյուս երկուսը՝ 18 տարին չլրացած Հրաչյան ու Սերժիկը:

Մեքենայի զննությամբ բեռնախցիկում հայտնաբերվեցին մարզակոշիկներ, իսկ սրահում՝ լինգ եւ թիթեղի մկրատ: Օպերատիվ տեղեկությունները հաստատվեցին, երբ ոստիկաններին հաջողվեց պարզել, որ հայտնաբերված կոշիկները հափշտակվել են Ռուբինյանց փողոցի խանութից:

Բերման ենթարկվածները խոստովանական բացատրություններ տվեցին: Մարտի 8-ին գողություն էին արել նաեւ Պետրոսյան փողոցի երկու հագուստի եւ Դավիթաշեն 4-րդ թաղամասի մթերային խանութներից: Տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին դռներն ու գողացել մի դեպքում դրամարկղի գումարը, մյուսում՝ դրամապանակ, երրորդում՝ տարբեր ապրանքներ: Մարտի 10-ին մտել էին Դավիթաշեն 2-րդ թաղամասում գործող գեղեցկության սրահն ու հափշտակել վարսավիրական պարագաներ: Մտել էին նաեւ Անդրանիկի փողոցի հագուստի եւ հուշանվերների խանութներն ու գողացել տարբեր ապրանքներ:

Պարզվել է նաեւ, որ Կարեն Ազոյանը փետրվարին Ջրվունի գյուղի առանձնատներից մեկի բակից գողացել էր անվադողեր:

Հարուցվել է քրեական գործ:

**Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:



Նեղուց, Հս. Եվրոպա
Ռումինահայ նկարիչ
Մանրաբեկոր ապար
Ռոմեն ...
Երգչական ձայն
Ձեռքի զարդ
Հայրենիքի ... / Նուրբ, քնքուշ
Իտալացի նկարիչ
Գիտնական
Աթլետիկ. գործիք / Կաղանդ
Աղեղ
Տորպեդահարող նավ
Ժան Պոլ ... (յակոբին)
Հեղուկ վառելանյութ
... Ձալկա / Մամուլի աշխատող
Ձմեռային 1-ին օլիմպ. մ/քաղաքը
Բրածո սողուն / Օբի վտակ
Նախանգ, ԱՄՆ / Երկդեմ աստված
Տողաշար մեքենա / «Յո երթաս», կայսր
Հիմնարկի ղեկավար / Գերմ. փիլ. եւ բանաստեղծ
Լեզվաբանական տակի գեղձ
Ծովի խորութ. չափելու սարք
Մարզագույք
Կնոջ քույրը / Լայն
Ժամանակի միավոր
Հայ բագավոր
Մեքսիկայի դրամ
1/2 / Ճկույթ
... Սինյորե / Ձիու կեր
«Գիրքը», գործ. անձ
... Խայամ
Բավիղ
Արգենտին. գրող
... Սքոթ
Հնդկաց. ժողովուրդ / Խորհրդ. զորավար
Բուրմունք / Քուրջ
Իտալ. քանդակագործ / Իսլամ
Ձայնանիշ
Վառ կարմիր / Հռոմ
Մագնիսական ...
Բրազիլ. քաղաք
Ռոսինի, օպերա
Անգլ. ֆիզիկոս / Անվախ
Պարսիկ բանաստեղծ
Մարտ / Այգաբաց
... Ֆրենկել
Ապրանքի ...
Նադալ, Ֆեդերեր
«Պեժո»
Անտառի ոգի / Գամ
Աքիլեսի մայրը / Մալուխ
Մոնղոլիդ
Ոչխար / Հեթանոս աստվածուհի
«Ինտեր» (...) / Մինոր
Հին հույն քաղ. եւ ռազմ. գործիչ
Չորացած ծիրան
Գործունեության ձեւ, եղանակ
Գետ, Փարիզ
Պտղատու ծառ / Դարպաս
Ֆրանս. կինոդերասան

# Ուշադրություն

## Հարգելի քաղաքացինե՛ր



ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Դրամատուն / ... Դարչինյան
Սվիֆթ, հերոս / «Սոլարիս»
Լատվիա / ... Հովհաննիսյան
«... ժուան» / Վոլգայի վտակ
Պապ
Ժառանգ. միավոր / ...ի հրավեր
... Բենդեր / Վիլայեթ
Հանքանյութ / Արեւել. կառավարիչ
... Քաչա / Լիճ, Օմսկի մարզ
Թութակի տեսակ
Հին նվագարան / Ֆուտբ. քայլերգ

# Աստղագուշակ

22.03 - 28.03



**Խոյ** - Հանգստյան օրերը կարող են նշանավորվել նոր տնտեսական հոգսերով: Կարող են հետաքրքրել գնումները:

**Ցուլ** - Շաբաթը ներդաշնակ է գործնական Ցուլերի համար, ովքեր միշտ պատրաստ են քրտնաջան աշխատանքի:

**Երկվորյակ** - Ստիպված կլինեք հիշել կենցաղի, տան, նորոգման, ընտանեկան պարտականությունների մասին:

**Խեցգետին** - Շաբաքը թույլ է տալիս հաճելին համատեղել օգտակարի հետ:

**Առյուծ** - Հնարավոր է մեկնեք ճանապարհորդության կամ կազմակերպեք միջոցառում, ինչը միջոցների ներդրում կպահանջի:

**Կույս** - Ձեր արարքներն ավելի գործնական են դառնում, իրադրությունը թույլ է տալիս վերադառնալ եկամտաբեր գործին:

**Կշեռք** - Խորհուրդ չի տրվում հանգստյան օրերին միջոցառում ծրագրել կամ որեւէ պատասխանատու քայլ անել:

**Կարիճ** - Հարաբերությունների սրումից խուսափելու համար ստիպված կլինեք համառությունը եւ ակտիվությունը համադրել դիվանագիտության հետ:

**Աղեղնավոր** - Ստիպված կլինեք ուշադրություն դարձնել տնտեսական կամ տեխնիկական գործերին: Հնարավոր է հետաձգեք որոշ ծրագրեր:

**Այծեղջյուր** - Հաջող պահ է սխալների ուղղման, նաեւ անձնական հարաբերությունների լավացման համար:

**Ջրհոս** - Հնարավոր է հետաքրքրություն՝ տան, արհեստանոցի բարեկարգման նկատմամբ:

**Ձուկ** - Խորհուրդ չի տրվում ուղղակի նախաձեռնություն դրսեւորել, սակայն կարող եք ձեր ուղին հարթել շրջանցիկ ճանապարհներով:

# Փորձեք լուծել

**Խնդիր N1**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից**

**Խնդիր N2**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից**

**Նախորդ խնդիրների պատասխանները**

Խնդիր N1 1. h4-g5 f6:d4 2.c1:e7 x

Խնդիր N2 1.f2-g3 d2:h6 2.h4-g5 h6:f4 3.g3:c3 x

Պատրաստեց
**Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ**
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

# Նախորդ համարի սկանվորդի պատասխանները




«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աքաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 21.03.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: